

պէս եւ ի մառախլապատ երկնի՝ շողն արեգին զա-
ղեղն ճաճանչաւոր եւ բազմագունակ յօրինէ:

Իսկ ի բարեգոհնի եւ աննախնի վերջանողն սոյն
մեծարան ասորոսածախան-նեան դիպեցի, որպէս ի
Մայիս ամսեանն զցօղոյ շիթս յերկնից ընկալեալ
զգեղեցկատեսիլ մարգարիտս յօրինեացէ: Եւ ի
նիւնալեաց հանդիպել օյբարոյնց, չէ զբանս ի
ցօղն ի նիւն փոխեցի. զի եւ մախճոտեալ ստամբ-
սաց յատկութիւն է, զեւս քաղցրագոյն կերակուրս
եւ բժշկական դեղորայս առ ինքն դարձուցանել,
չնիւս աւել ինչ առ պապիսիս. քանզի եւ Եբրայե-
ցիք զարդարն եւ զանարատն Յիսուս մահու արժան
դատեցին...: Բայց թերեւս այցելութիւն ի
Տեառնէ եկեալ, բացցէ Տէր Յիսուս զաչս սիրելի
ազին իմոյ ճանաչել զչար եւ զբարի, զչարս-օղն եւ
իւրիւրիւն, զբարիւն ընդ լայր եւ զժողովօղն ի մի
վայր:» (Յիշատիարան Սկիթի:)

Հաննէ նոյն սկզբունքները կը պաշտպանէ
շեշտելով օրար կամ այլափառ հեղինակներու ան-
ժխտելի առաւելութիւնները: 1 Հաննէին հայեացքը,
քիչ մ'ետքը իր բնագրով յառաջ պիտի բերենք:
Նախնաւ ալ իր վարդապետին ողջ սկզբունքները
կը պաշտպանէ երբ կը խօսի օտար հեղինակներու
օգտակարութեան վրայ, իւր նարեկի Մեկնութեան
Յառաջաբանին կամ Ներածութեան վերջերք:

Իր թարգմանել տուած գիրքերուն համար
հաստատապէս ըսաւ. «Թէ ումեք դիպեցի տեսա-

1 Միեւնոյն աննախնի ոգւով գիտեց ու գրուա-
տեց Միխիթար Աբբայի գրական գործունէութիւնը: Ըստ
Չամչեանի (հատոր Գ. էջ 775) Կոլոտ տեսնելով Միխիթար
Աբբայի «զընդարձակ մեկնութիւն Մատթէի լցառ ուրախու-
թեամբ, եւ գովեաց զնոյն ի քարոզի իւրում ի մէջ եկե-
ղեցւոյ, յասելն. լոյս մեծ ծագեաց այսօր եկեղեցւոյս
Հայոց. դանձ տուաւ յաստուծոյ գիրքս այս» եւն. հմմտ.
Վարք Միխիթարայ Աբբայի էջ 408: